

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՕԹՆԵԱԿ ՄԵԾ ՊԱՀՈՑ

Մեծ Պահոց եօթ շաբաթներու վրայ երկարող ժամանակաշրջանը, հաւատացեալը կը հրաւիրէ հոգեւոր ինքնամփոփման, և միաժամանակ առիթը կ'ընծայէ ենթակային քննելու իր մարմինն ու հոգին, որովհետեւ կեանքը անվերջ պայքար մըն է մղուող մեղքին և նիւթին դէմ, գուպար մը առաքինութեան և կիրքին միջեւ: Ինչպէս որ մարդը չկրնար հրաժարիլ մեղքէն, նոյնպէս ալ չկրնար հրաժարիլ Աստուծմէ: Եթէ մէկ կողմէն ան կը սիրէ մարմինը, կը սիրէ նաեւ հոգին, թէեւ այս երկուքը թշնամիներ չեն, այսուհանդերձ անոնք նոյն ուղիէն չեն ընթանար, և Մեծ Պահոց այս շրջանը կոշուած է նպաստելու անոնց համերաշխ և ներդաշնակ համագործակցութեան:

Մարդ արարածը ինքնին՝ ծայրայեղութիւններով լեցուն էակ մըն է. ան միշտ կ'ուզէ բացուիլ կեանքին և իր այդ ճիգին մէջ կ'իյնայ աշխարհիկ ու գոեհիկ հաճոյքներու մէջ: Մինչ միւս կողմէն, մեղքէն հեռանալու իր փորձին մէջ ալ անոր հոգեւոր կեանքը երբեմն կը վերածուի անապատական և կամ ճգնակեաց կեանքի գինք նետելով օրէնքի ճիրաններուն մէջ: Ան կը դիմէ ազատութեան և կը յանգի անկարգութեան, անկասկած դժուար է մարդուն համար պահել իրերու հաւասարակշռութիւնը կեանքի պահանջներուն և փորձութիւններուն դէմ, հակառակ Քրիստոսի պատգամին, «Ո՛չ կարե՛ք երկու տերանց ծառայել, Աստուծոյ և մամոնայի», ան միշտ տրամադիր է ծառայել երկու տէրերու, և Մեծ Պահոցի գլխաւոր նպատակն է մարմինն միջոցաւ բուժել հոգին, այսինքն՝ սանձել մարմինը առիթ տալով հոգիին, և այս կարելի կ'ըլլայ միայն սանձումովը մարմնին, ֆիզիքականին:

Մեծ Պահոց Եօթնեակի այս շրջանին, իրա՛ւ հաւատացեալը պարտի սուզուիլ իր ներաշխարհին մէջ, վերլուծելու իր ներքին վերիվայրումներն ու կեանքի ելեւէջները, պայքարի միտող խեռ և ժխտական զգացումներու դէմ: Ու մղուած այս նոյն մտահոգութենէն օտար քարոզիչ մը կ'արտայայտուի այսպէս. «Եթէ օր մը Աստուած յայտնուէր ինծի և ըսէր. «Պիտի ուզէի՞ր որ մարդկային բնութիւնդ փոխէի և քեզ վերածէի անմեղ հրեշտակի մը», անկասկած պիտի մերժէի ըսելով. «Ո՛չ Տէր, պահէ՛ իմ մարդկային տկարութիւններս և սայթափումները, միայն թէ ասոնց կողքին՝ մէջս շնորհիմ այդ անկումներուն դէմ պայքարելու գիտակցութիւնս և կամքս», որ կը նշանակէ՝ եթէ Հայր Աստուած մէկ կողմէն մարդ արարածին տուած է մեղանշական բնութիւն, միւս կողմէն ալ ատոր առընթեր մեզի տուած է ներքին պայքարի գէնքը, մարտնչելու ունակութիւնը, որուն միջոցաւ մենք կը գիտակցինք մեր իրա՛ւ ես-ին և մենք զմեզ հեռու կը պահենք մարդկային բնախօսական պահանջներէ և անոնց հետեւանք՝ փորձութիւններէ:

Բուն Բարեկենդանի եօթ շաբաթներու այս շրջանը, քրիստոնէութեան Հայաստան մուտք գործելէն ի վեր մեզի՝ հայոց համար եղած է ո՛չ միայն կրօնական, այլ միաժամանակ ազգային և ընկերային կեանքին անբաժան մէկ մասնիկը, ուր Մեծ Պահոցը հոգեւոր պատրաստութեան շրջան մը ըլլալուն հետ, հայուն համար կը դառնայ առօրեայի սովորական պայմաններու լոկ փոփոխութեան շրջան մը:

Միւս կողմէն սակայն, Քրիստոնեայ աշխարհի մօտեցումը պահքի և պահեցողութեան, սովորական մօտեցումէ վեր չբարձրանար, համաձայն որուն պահքի արժէքը կը կայանայ միմիայն մարմինը զրկել որոշ հաճոյքներէ, բան մը որ միայն արտաքին երեւոյթ է, որովհետեւ էականը ներքինը կերտելն է, որ կ'ըլլայ միայն ապաշխարութեամբ և անկեղծ զղջումով, որուն կ'անդրադառնայ Պօղոս Առաքեալ,

Հոռվմէացիներուն ուղղած իր նամակով, երբ կ'ըսէ. «Ձի ոչ է արհայութիւն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ՝ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն է Հոգին Սուրբ» (Հոռվմ. ԺԴ:27):

Մարդը կը պատժուի իր գործած մեղքերուն համար, սակայն անոնց մեր մէջ ստեղծած յոյզերն ու տագնապները դարձեալ երկինքը կը բանան մեր աչքերուն առաջ, և միայն անկեղծ զղջումի ճամբան է ճիշդ ճամբան մարդը դէպի Աստուած առաջնորդող: Մենք միշտ պարտինք յիշել, որ մեղքը մարդուն կեանքի ճամբան մթաւքօղող ամպն է: Եթէ մենք կ'ուզենք բարձրանալ և ունենալ որոշ արժանապատուութիւն, մենք պարտինք մեր միտքն ու հոգին աստուածացնել, որովհետեւ հոգիի սնանկութիւնը մեծագոյն շարիքն է տրուած մեզմէ՝ մեզի:

Իսկ այս օրերուն ինչ կը պակսի մեր ներկայ սերունդին, ո՛չ միայն երիտասարդ այլ նաեւ տարեց, եթէ ոչ՝ միայն հոգեկանին ու հոգեւորին ձգտումը: Դժբախտաբար այս ոգին կը պակսի նոյնիսկ այսպէս ըսած հոգիի մատուակ մեր հոգեւորականներուն մօտ, որոնք տարուած նիւթին անդոհէն կը մոռնան իրենց իրա՛ւ կոչումը ու կը շարունակեն հետամտիլ մամոնային:

Մեծ Պահոց Քառասնօրեայ այս շրջանը թող վերազարթօնք մը ըլլայ բոլորիս, և հետամտինք միայն յաւիտենականին ու երկնայինին:

Ն.Ա.Մ.

